

Արտատպված է՝ XX դարի արտասահմանյան արձակ, հատոր 1 (անգլո-ամերիկյան պատմված), Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984: Ծանոթագրություններ՝ Ս. Ե. Փանոսյանի:

## ՇԵՐՎՈՒՂ ԱՆԴԵՐՍՈՆ

### ՁՈՒՆ

#### Թարգմ. Լաուրա Մանուկյան

Հայրս, համոզված եմ, բնությամբ հակված էր կենսախինդ ու բարի լինելու: Մինչև 34 տարեկանը նա որպես մշակ աշխատում էր մի մարդու մոտ, որի անունն էր Թոմաս Բաթլերուրթ, և որի ագարակը Օհայոյի<sup>1</sup> Բիդուել քաղաքի մոտ էր: Այդ ժամանակ հայրս ուներ իր սեփական ձին և, սովորաբար, ամեն շաբաթ իրիկուն գնում էր քաղաք՝ մի քանի ժամ այլ մշակների հասարակությունում լինելու համար: Քաղաքում նա մի քանի բաժակ զարեջուր էր խմում և հենց այնպես կանգնում էր Բեն Հեդի սրահում, որ շաբաթ իրիկունները լիքն էր լինում այցելու մշակներով: Երգեր էին երգվում, բաժակներ էին զարնվում վաճառասեղանին: Ժամը տասին հայրս տուն էր գնում գյուղական ամայի ճանապարհով, ձիուն ախտոն էր անում, ինքն էլ գնում, պառկում էր՝ կյանքում իր ունեցած դիրքից միանգամայն երջանիկ: Այդ ժամանակ նրա մտքով էլ չէր անցնում ավելի բարձր դիրքի հասնելու փորձ անել:

Իր երեսունհինգերորդ տարվա գարնանն էր, որ հայրս ամուսնացավ մորս հետ, որն այն ժամանակ դպրոցական վարժուհի էր: Հաջորդ գարնանը աշխարհ եկա ես՝ անհանգիստ ու ճղճղան: Ինչ-որ բան պատահեց այդ երկու մարդկանց՝ նրանք դարձան փառասեր: Աշխարհի սանդուղքով վեր բարձրանալու ամերիկյան կիրքը տիրեց և նրանց: Գուցե մայրս էր մեղավոր: Դպրոցական վարժուհի լինելով՝ նա, անկասկած, կարդացել էր գրքեր ու ամսագրեր: Ենթադրում եմ, կարդացել էր, թե ինչպես են Գարֆիլդը<sup>2</sup>, Լինքոլնը<sup>3</sup> և այլ ամերիկացիք աղքատությունից հասել փառքի ու մեծության: Իմ կողքին պառկած՝ նա գուցե երազել էր, որ մի օր կկառավարեմ մարդկանց ու քաղաքներ: Դրա համար էլ նա հորս դրդեց թողնել մշակի իր գործը, ծախել իր ձին և ձեռնամուխ լինել անկախ, մասնավոր գործի: Մայրս բարձրահասակ, լուսկյաց կին էր՝ երկար քթով ու անհանգիստ գորշ աչքերով: Իր համար ոչինչ չէր ուզում: Ինձ ու հորս համար նա անուղղելի փառասեր էր:

Առաջին արկածը, որին այդ երկու մարդիկ հանդիպեցին, վատ վերջացավ: Նրանք տասն ակր աղքատ, քարքարոտ հող վարձակալեցին Գրիգի Բոուդի մոտ՝ Բիդուելից ութ մղոն հեռու և ձեռնամուխ եղան վառեկներ բուծելուն: Ես մանկությունս ապրեցի այդտեղ, որտեղ և ստացա կյանքիս առաջին տպավորությունները: Սկզբում դրանք աղետի տպավորություններ էին, և եթե ես մռայլ մարդ եմ, որն առավելապես հակված է տեսնելու կյանքի մութ կողմերը, վերագրում եմ այդ փաստին: Ուրիշ ի՞նչ պիտի լինեին ինձ համար մանկության երջանիկ, խնդալից օրերը, որ անցան թռչնաբուծարանում:

Այս գործին անտեղյակ մեկը չի կարող որևէ պատկերացում ունենալ այն բազմաթիվ ու ողբերգական բաների մասին, որ կարող են պատահել վառեկին: Վառեկը ծնվում է ձվից, մի քանի շաբաթ ապրում է որպես լղար, աղվամազոտ մի էակ, որպիսին կարող եք տեսնել զատիկի բացիկներին նկարված, անճանաչելիորեն տկլորվում է, ուտում է հորդ ճակատի

<sup>1</sup> Օհայո – ԱՄՆ-ի հյուսիսային նահանգներից. վարչական կենտրոնը Կոլումբոս քաղաքն է:

<sup>2</sup> Ջեյմս Աբրահամ Գարֆիլդ (1831-1881). Միացյալ Նահանգների քսաներորդ պրիզիդենտը, որը 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ Հյուսիսի բանակի հրամանատարներից էր:

<sup>3</sup> Լինքոլն – Աբրահամ Լինքոլն (1809-1865). ԱՄՆ-ի պրեզիդենտ. Հանրապետական կուսակցության կազմակերպիչներից մեկը: Հանդես էր գալիս ստրկատիրության դեմ:

քրտինքով գնված ցորենն ու շիլան, վարակվում գորտախտով, խոլերայով և զանազան այլ ախտերով, կանգնում, հիմար աչքերով նայում է արևին, հիվանդանում է ու սատկում : Մի քանի հավ ու երբեմն որևէ աքաղաղ, որ ունեն Աստծո նախախնամությունը, մարտնչում են մինչև հասունություն: Հավերը ձու են դնում, որոնցից դուրս են գալիս ուրիշ ճտեր, և այդպիսով զարհուրելի շրջանը դարձնում են ավարտում: Այդ ամենը անհավատալիորեն բարդ է: Փիլիսոփաներից շատերը պետք է որ ձևավորված լինեն թոչնաբուծարանում: Մարդ այնքան շատ հույս է կապում մի ճտի հետ և այնքան սոսկալիորեն պատրանքագրկվում: Հենց նոր կյանքի ճամփան բռնած պստիկ ճտերը այնքան պայծառ ու սթափ տեսք ունեն, բայց իրականում սարսափելի հիմար են: Նրանք այնքան նման են մարդկանց, որ շփոթվում են կյանքի մասին դատողություններում: Եթե ախտը չի սպանում նրանց, և ապրում են մինչև ակնկալիքներիդ իրականացումը, ապա գնում են դեպի մորթանիվները և ձորած ու սատակած վերադառնում են իրենց արարչի մոտ: Ճիճուները փչացնում են նրանց պատանությանը, և անհաշիվ բուժափոշիներ են ծախսվում: Հետագայում ես տեսել եմ ոնց է գրականություն սարքվում այն մասին, թե ինչպես կարելի է ապագա ստեղծել ճտերի աճը հաջողությամբ տանելով: Դա նախատեսված է այն աստվածների համար, որոնք հենց նոր համտեսել են բարու և չարի իմացության ծառից<sup>4</sup>: Հուսատու գրականություն է և հայտարարում է, որ պարզմիտ, փառատենչ մարդիկ, որոնք մի քանի հավ ունեն, շատ բան կարող են անել: Մի սխալվեք, մի առաջնորդվեք դրանով: Դա մեզ համար չի գրված: Գնացեք Ալյասկայի<sup>5</sup> լեռները ոսկի որոնելու, հավատ ընծայեք քաղաքագետի ազնվությանը. հավատացեք, եթե կամենում եք, որ աշխարհը օրավուր լավանում է, և որ բարին կհաղթի չարին, բայց մի կարդացեք ու մի հավատացեք հավերի մասին սարքված գրականությանը: Դա ձեզ համար չի գրված:

Այնուամենայնիվ, ես շեղվում եմ: Իմ պատմությունն ուղղակիորեն հավերին չի վերաբերում: Եթե ճշտորեն պատմվի, այն կկենտրոնանա ձվի շուրջ: Տասը տարի հայրս ու մայրս մեր թոչնաբուծարանում պայքարեցին եկամուտ ստանալու համար, իսկ հետո ձեռք բաշեցին այդ պայքարից և սկսեցին ուրիշը: Նրանք տեղափոխվեցին Օհայոյի Բիդուել քաղաքը և ձեռնամուխ եղան ռեստորանային գործի: Այդ տասը տարվա անհանգստությունից հետո՝ ինկուբատորների հետ, որոնք ձագ չէին տալիս, լղար, յուրովի սիրունիկ-աղվամազագնդիկների հետ, որոնք շարունակվում էին որպես նույնքան մերկ վառելիքություն և ապա սատկած հավություն,— այդ տասնամյա անհանգստությունից հետո,— մենք ամեն ինչ դեն նետեցինք և մեր ունեցած-չունեցածը ճամպրուկավորելով մի սայլի վրա՝ Գրիգս Ռոուդով գնացինք դեպի Բիդուել. հույսի փոքրիկ քարավան, որ փնտրում էր մի նոր տեղ, և որից պիտի սկիզբ առներ կյանքի բովով մեր վերընթաց ճանապարհորդությունը:

Երևակայում եմ, մենք պետք է որ տխուր տեսք ունենայինք՝ մարտադաշտը լքող փախստականների նման: Ես ու մայրս ոտքով էինք գնում: Ֆուրգոնը, որ բեռնված էր մեր ունեցվածքով, մեկ օրով փոխ էինք առել մի հարևանից՝ Ալբերտ Գրիգսից: Նրա կողքերից դուրս էին ցցվել էժան արթոնների ոտքերը, իսկ մահճակալների ցանցերի, սեղանների, խոհանոցի աման-չամանով լցված արկղերի հետևում կենդանի վառելիքների փոխադրավանդակներն էին. դրանց կատարին մանկասայլակն էր, որով ինձ զբոսանքների էին հանել երեխա ժամանակ: Ինչու պահեցինք մանկասայլակը, չգիտեմ: Խելքի մոտ բան չէր, թե ուրիշ երեխաներ կծնվեին, և անիվներն էլ կոտրված էին: Մարդիկ, որոնց ունեցվածքը քիչ է, ամուր կառչում են այն ամենից, ինչ ունեն: Դա կյանքը դառնացնող փաստերից մեկն է:

Հայրս նստած էր կառքի վերևում: Այդ ժամանակ նա ճաղատ գլխով քառասունհինգամյա մարդ էր՝ մի քիչ գեր, և մորս ու ճտերի հետ երկար համակեցությունից վիատ ու լռակյաց էր դարձել: Թոչնաբուծության տասը տարիների ընթացքում հարևան ագարակներում մշակ էր

<sup>4</sup> ...որոնք նոր համտեսել են բարու և չարի իմացության ծառից – նկատի ունի առաջին մարդկանց՝ Ադամին ու Եվային:

<sup>5</sup> Ալյասկա – թերակղզի Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևմուտքում:

աշխատել, և վաստակած փողի մեծ մասը ծախսվել էր ճտախտերը բուժելու դեղուղաբանի վրա՝ Ուիլմերի խոլերաբուժ Սպիտակ Հրաշքի կամ պրոֆեսոր Բիդլոուի ձվարտադրիչի և այլ դեղամիջոցների վրա, որ թոչնաբուծական թերթերի ռեկլամներից մայրս էր գտնում:

Հորս գլխին՝ հենց ականջների վերևում, երկու մազափունջ կար: Հիշում եմ, դեռ մանկուց սովորություն ունեի նստելու ու նրան նայելու, երբ ձմռանը՝ շաբաթ միջօրեներին քնում էր օջախի մոտ՝ աթոռի վրա: Այդ ժամանակ ես արդեն սկսել էի գրքեր կարդալ և սեփական ըմբռնումներ ունեի: Գլուխն ի վեր անցնող ճաղատ հետքը նման էր լայն ճանապարհի, այնպիսի մի ճանապարհի, որը կարող էր սար-քած լինել Կեսարը<sup>6</sup> և որտեղով նա իր լեգեոներներին Հռոմից դեպի անհայտ աշխարհի հրաշալիքները պիտի տաներ: Հորս ականջների վերևում աճած մազափունջերը, մտածում էի, նման են անտառների: Կիսաքուն-կիսարթուն վիճակի մեջ երագում էի, թե մանրիկ էակ եմ ու գնում եմ այդ ճանապարհով մի հեռու ու գեղեցիկ տեղ, որտեղ թոչնաբուծարաններ չկան, և կյանքը երջանիկ ու անհավկիթ զբաղմունք է:

Կարելի է մի գիրք գրել թոչնաբուծաբանից քաղաք մեր տեղափոխության մասին: Ես ու մայրս ոտքով գնացինք ամբողջ ութ մղոն: Մայրս, որպեսզի համոզված լինի, որ կառքից ոչինչ չի ընկնում, իսկ ես՝ որ տեսնեմ աշխարհի հրաշալիքները: Ֆուրգոնում, հորս կողքին նստարանին, գանձն էր: Պատմեմ այդ մասին: Թոչնաբուծարանում, ուր բազմիցս հազարավոր ճտեր են ձվից ելնում, երբեմն զարմանալի բաներ են պատահում: Ինչպես մարդկանցից, հավկիթներից էլ են այլանդակներ ծնվում: Դա հաճախ չի լինում՝ հազար ծնունդի մեջ, թերևս, մեկ անգամ: Հասկանում եք, ծնվում է մի ճուտիկ, որն ունի չորս ոտք, երկու զույգ թև, երկու գլուխ կամ ինչ ասես: Դրանք չեն ապրում: Շատ շուտով վերադառնում են իրենց արարչի ձեռքը, որ գողացել էր մի պահ: Այն փաստը, որ այդ խեղճ փոքր էակները չեն կարող ապրել, հորս կյանքի ողբերգություններից մեկն էր: Նա այն մտքին էր, որ եթե կարողանա գոնե հավային կամ աքլորային հասունության հասցնել հինգոտանի հավին կամ երկգլխանի աքլորին, ինքը կբախտավորվի: Երագում էր, թե ոնց կտանի այդ հրաշքը երկրի տոնավաճառներ և ինչպես կհարստանա՝ ցույց տալով մյուս մշակներին:

Ահա թե ինչու նա պահպանում էր բոլոր այն ճիվաղ էակներեն, որ ծնվել էին մեր թոչնաբուծարանում: Դրանք պահվում էին սպիրտի մեջ՝ յուրաքանչյուրն առանձին ապակե շշում: Այդ ամենը հայրս խնամքով տեղավորել էր մի արկղի մեջ: Մեր ճամփորդության ժամանակ այն դրված էր ֆուրգոնի նստարանին՝ նրա կողքին: Հայրս մի ձեռքով ձիավարում էր, իսկ մյուսով պինդ բռնել էր արկղը: Երբ մենք տեղ հասանք, արկղն իսկույն ցած բերվեց, և շշերը դուրս հանվեցին: Այն օրերին, երբ մենք Օհայոյի Բիդլուեյ քաղաքում տնօրինում էինք ռեստորանը, հրեշները փոքր ապակե շշերի մեջ դրված էին վաճառասեղանի հետնադարակին: Մայրս երբեմն բողոքում էր, բայց հայրս այդ հարցում ապառաժ էր:

— Հրեշները, — հայտարարում էր, — արժեքավոր են: Մարդիկ, — ասում էր նա, — սիրում են նայել տարօրինակ ու հրաշալի բաներին:

Ասացի չե՞մ, որ Օհայոյի Բիդլուեյ քաղաքում ռեստորանային գործ սկսեցինք: Փոքր-ինչ չափազանցեցի: Քաղաքն իրականում ընկած էր ցածր բլուրի ստորոտին և մի գետակի ափին: Քաղաքի միջով երկաթգիծ չէր անցնում, և կայարանը Փիքլուիլ կոչվող վայրում էր՝ մի մղոն դեպի հյուսիս: Մի ժամանակ կայարանում հյուրերի գործարան էր եղել, բայց նախքան մեր գալը նրանք շարքից դուրս էին եկել: Առավոտյան ու երեկոյան ավտոբուսները Բիդլուեյի գլխավոր փողոցի հյուրանոցից գալիս էին կայարան մի ճանապարհով, որ կոչվում էր Թըրնըզ Փայք: Այն, որ մենք ռեստորան բացեցինք ճանապարհից հեռու, մորս մտահոգացումն էր: Մի տարի շարունակ նա խոսում էր այդ մասին և մի օր էլ գնաց ու կայարանի դիմաց մի դատարկ պահեստաշենք վարձեց: Այդ նրա միտքն էր, որ ռեստորանը պետք է շահութաբեր լինի:

---

<sup>6</sup> Կեսար Գայուս Հուլիոս Կեսար (մ. թ. ա. 102-44 թթ.). հռոմեական դիկտատոր, զորավար: Միապետության կողմնակից էր. դավադրաբար սպանվել է հանրապետականների կողմից:

«Ճամփորդող մարդիկ,— ասաց մայրս,— միշտ էլ մոտերքում կլինեն՝ քաղաքից գնացքով մեկնելու համար, իսկ քաղաքի ժողովուրդը կգա կայարան՝ սպասելու եկող-գնացողներին: Նրանք կգան ռեստորան՝ մի կտոր թխվածք գնելու և սուրճ խմելու»: Այժմ, երբ ավելի մեծ եմ, գիտեմ, որ նա գնալու այլ շարժառիթ էլ ուներ: Իմ ապագայի հարցում նա փառատենչ էր: Ուզում էր, որ բարձր դիրքի հասնեմ, քաղաքի դպրոց հաճախեմ ու քաղաքների մարդ դառնամ:

Փիքվիլում հայրս ու մայրս, ինչպես միշտ, ծանր էին աշխատում: Սկզբում անհրաժեշտ եղավ մեր տունը ռեստորանի նման մի բան դարձնել: Դա խլեց մի ամիս: Հայրս սարքեց մի դարակ, որի վրա դրեց բանջարեղենի պահածոները: Նկարեց մի ազդ, որի վրա գրեց իր անունը՝ կարմիր խոշոր տառերով: Անվան տակ «Կերեք այստեղ» սուր հրամանն էր, որին շատ հազվադեպ էին ենթարկվում: Յուցափեղկ գնվեց և լցվեց գլանակներով ու ծխախոտով: Մայրս քերեց հատակն ու սենյակի պատերը: Ես հաճախում էի քաղաքի դպրոց և ուրախ էի ազարակից ու վիատ, տխրատես ճտերի ներկայությունից հեռու լինելու համար: Բայց էլի ես շատ էլ ուրախ չէի: Երեկոյան Թըրնըզ Փայքով դպրոցից տուն էի գնում ոտքով ու հիշում երեխաներին, որոնց տեսել էի քաղաքային դպրոցի բակում խաղալիս: Փոքր աղջիկների մի ջուկ էր գնում ցատկոտելով ու երգելով: Ես փորձեցի նույնն անել: Սառցամած ճանապարհն ի վար գնացի՝ հանդիսավորությամբ մի ոտքի վրա ցատկոտելով:

Հոպըլա, հոպ, հոպըլա հոպ,  
Դե շուտ թո՛ղ վարսավիրի մոտ:

Երգեցի սուր ձայնով: Ապա կանգ առա ու կասկածանքով նայեցի շուրջս: Վախեցա, որ ինձ կտեսնեն լավ տրամադրության մեջ: Ինձ, անշուշտ, թվացել էր, թե մի բան եմ արել, որ չպիտի աներ այնպիսի մեկը, ինչպիսին ես եմ, այնպիսի մեկը, որ հասակ էր առել թռչնաբուծարանում, ուր մահը առօրյա այցելու էր:

Մայրս որոշեց, որ մեր ռեստորանը գիշերը պետք է բաց մնա: Երեկոյան 10-ին դռան մոտով անցնում էր մարդատար գնացքը, որին հետևում էր տեղական ապրանքատարը: Ապրանքատարի անձնակազմը Փիքվիլում միացման գործեր ուներ անելու, և երբ աշխատանքը ավարտվում էր, նրանք գալիս էին ռեստորան տաք սուրճի ու կերակուրի համար: Երբեմն նրանցից մեկը միալու էր պատվիրում: Առավոտյան ժամը 4-ին նրանք վերադառնում էին հյուսիսային ծայրը և նորից էին այցելում մեզ: Փոքրիկ առևտուրը սկսում էր աճել: Մայրս գիշերը քնում էր, իսկ ցերեկը զբաղվում ռեստորանի հոգսերով. կերակրում էր վարձով կենվորներին՝ մինչ հայրս քնած էր: Նա քնում էր այն նույն մահճակալին, որը մայրս էր զբաղեցնում գիշերը, իսկ ես գնում էի Բիդուել՝ քաղաքամեջ և դպրոց: Երկար գիշերներին, մինչ ես ու մայրս քնած էինք, հայրս միսն էր եփում, որ կտոր-կտոր պիտի դրվեր կենվորների նախաճաշիկի զամբյուղներում տեղավորվող սանդվիչների<sup>7</sup> մեջ: Այդպես կամաց-կամաց նրա գլուխը մտավ կյանքում բարձրանալու գաղափարը, ամերիկյան ոգին տիրեց նրան: Նա նույնպես փառասեր դարձավ:

Երկար գիշերներին, երբ քիչ բան կար անելու, հայրս ժամանակ ուներ մտածելու: Դա էր նրա կործանումը: Նա որոշեց, որ ինքը անցյալում անհաջողակ մարդ է եղել, որովհետև բավականաչափ կենսուրախ չի եղել և ապագայում պետք է ավելի լավատեսութեն նայի կյանքին: Վաղ առավոտյան բարձրանում էր վեր և անկողին մտնում: Մայրս զարթնում էր, երկուսով զրուցում էին: Անկյունում՝ իմ մահճակալից ես լսում էի:

Այդ հորս միտքն էր, որ նրանք երկուսն էլ՝ և՛ հայրս, և՛ մայրս պետք է փորձեին զվարճացնել մեր ռեստորանի հաճախորդներին: Այժմ չեմ կարող հիշել հորս բառերը, բայց այն տպավորությունն ստացա, որ ինքը այն մարդկանցից է, որոնք ինչ-որ անըմբռնելի կերպով, բայց և այնպես մոտ են դառնալու զվարճարար կամ նման մի բան: Երբ մարդիկ,

---

<sup>7</sup> Սանդվիչ – հացի երկու շերտ, որոնց միջև կարագ ու երշիկ է:

մասնավորապես Բիդուել քաղաքի ջահելները, գան մեզ մոտ, մի բան, որ հազվադեպ են անում, պետք է աշխույժ, հետաքրքիր զրույց սկսել: Հորս խոսքից եզրակացրի, որ հարկավոր էր զվարճասեր պանդոկապանի դերի պես մի բան ստանձնել: Մայրս հենց սկզբից պետք է որ կասկածելիս լինեմ, բայց նա վիատեցնող ոչ մի բան չասաց: Հորս կարծիքով Բիդուել քաղաքի ջահելությունը պիտի հրապուրվեր իր ու մորս նախաձեռնությամբ: Երեկոյան աշխույժ, երջանիկ խմբեր կգային Թըրնըզ Փայքն ի վար երգելով: Աղմկոտ կատակներով ու ծիծաղով նրանք կհավաքվեին մեզ մոտ: Կլիներ երգ ու տոնախմբություն: Միտք չունեմ այնպիսի տպավորություն ստեղծել, թե հայրս դրա մասին խոսում էր հանգամանորեն: Նա, ինչպես ասել եմ, քչախոս մարդ էր: Նրանց գնալու որևէ տեղ է պետք,— նորից ու նորից կրկնում էր նա: Ահա այն ամենը, ինչ նա ասում էր: Մնացածը լրացնում էր իմ երևակայությունը:

Երկու-երեք շաբաթ հորս այդ գաղափարը նվաճել էր մեր տունը: Մենք շատ չէինք խոսում, բայց առօրյա կյանքում անկեղծորեն ջանում էինք, որ ժպիտները փոխարինեն խոժոռ հայացքներին: Մայրս ժպտում էր կենվորներին, իսկ ես, վարակվելով նրանից, ժպտում էի մեր կատվին: Հայրս գոհացնելու իր փափագով մի քիչ տենդահարվեց: Անկասկած, նրա մեջ ինչ-որ տեղ թաքնված էր աճապարաբի հոգու մի նշույլ: Նա իր լիցքապաշարից շատ չէր ծախսում երկաթգծի մարդկանց վրա, որոնց սպասարկում էր գիշերը, այլ կարծես սպասում էր, որ ներս մտնի մի երիտասարդ տղամարդ կամ կին, որպեսզի ցույց տա իր ունակությունը: Ռեստորանի վաճառասեղանին մի հյուսված գամբյուղ կար, որը միշտ լիքն էր լինում ձվերով: Այն, անշուշտ, նրա աչքի առաջ էր եղել, երբ ուղեղում ծնվել էր զվարճացնելու միտքը: Ինչ-որ նախաձեռնության բան կար ձվերը պահելու ձևի մեջ՝ կապված նրա գաղափարի զարգացման հետ: Այնուհանդերձ, ձուն կործանեց նրա կենսական նոր մղումը:

Մի անգամ ուշ գիշերին ես զարթնեցի բարկության մի մոնչոցից, որ գալիս էր հորս կոկորդից: Թե՛ ես, թե՛ մայրս անկողիններում իսկույն դիք նստեցինք: Մայրս դողացող ձեռքերով վառեց սեղանին դրված լամպը, որը գտնվում էր նրա մոտ: Ներքևում՝ աստիճանների վերջում ռեստորանի շքադուռը շրխկոցով փակվեց, և մի քանի րոպեից հայրս ծանրաքայլ բարձրացավ աստիճաններով: Նրա ձեռքին մի ձու կար, և ձեռքը դողում էր այնպես, կարծես ցրտահարված լինեմ: Աչքերում կիսախելագար փայլ կար: Երբ նա կանգնեց ու հայացքը հառեց մեզ, համոզված էի, որ նպատակ ունի ձուն շաքտելու կամ ինձ, կամ մորս վրա: Նա ձուն նրբորեն դրեց սեղանին՝ լամպի կողքին և ծնկների վրա ընկավ մորս մահճակալի մոտ: Սկսեց լաց լինել տղայի նման, և ես, նրա վշտին կարեկից, լաց էի լինում նրա հետ: Մենք փոքրիկ վերնասենյակը լցրինք լաց ու կոծով: Ծիծաղելի է, բայց մեր կազմած խմբակարից ես կարող եմ հիշել այն, որ մայրս անընդհատ շոյում էր հորս գլխի ճաղատը: Մոռացել եմ, թե ինչ ասաց նա հորս, ինչպես դրդեց պատմելու ներքևում պատահածի մասին: Հորս բացատրությունը նույնպես մտքիցս գնացել է: Հիշում եմ միայն իմ սեփական վիշտն ու սարսափը և հորս գլխի փայլուն արահետը, որ շողում էր լամպի լույսից, երբ նա կռացնում էր գլուխը:

Ներքևում պատահածի վերաբերյալ: Անբացատրելի պատճառով ես պատմությունը գիտեմ այնքան լավ, կարծես ականատես եմ եղել հորս խորտակմանը: Ժամանակի ընթացքում մարդ անբացատրելի շատ բաներ է իմանում:

Այդ երեկո երիտասարդ Ջո Քեյնը՝ որդին բիդուելցի մի առևտրականի, գալիս է Փիքվիլ՝ դիմավորելու հորը, որը պիտի գար հարավային գնացքով՝ երեկոյան ժամը 10-ին: Գնացքը երեք ժամ ուշանամ էր, և Ջոնը գալիս է մեզ մոտ ժամանակ սպանելու և սպասելու գնացքին:

Գալիս է տեղական ապրանքատար գնացքը, ուղևորները կերակրվում են, Ջոն ու հայրս մենակ են մնում:

Այն պահից, ինչ Ջոն եկել էր մեզ մոտ, բիդուելցի երիտասարդը պետք է որ շվարած լինեմ հորս գործողություններից: Նա այնպես էր կարծում, թե հայրս բարկացած է այն բանից, որ ինքը քարշ է գալիս մոտերքում: Նկատելով, որ ռեստորանատերը ակնհայտորեն անհանգստացած է իր ներկայությունից, Ջոն մտածում է դուրս գալ: Բայց այդ ժամանակ

սկսում է անձրնել և ճանապարհը՝ քաղաք ու հետդարձ, նույնիսկ չէր կարելի պատկերացնել: Նա հինգսենթանոց գլանակ է գնում և պատվիրում մի գավաթ սուրճ:

Գրպանում լրագիր ուներ, դուրս է բերում ու սկսում կարդալ:

— Ես սպասում եմ երեկոյան գնացքին: Այն ուշանում է,— ասում է նա չքմեղանքով:

Երկար ժամանակ հայրս, ում Ջո Քեյնը առաջ երբեք չէր տեսել, լուռ նայում է իր այցելուին: Նա, անկասկած, տառապում էր բեմելի վախի նուազից: Ինչպես հաճախ է պատահում, նա այնքան շատ էր մտածել այդ իրադրության մասին, որ այժմ, երբ դեմ հանդիման էր դրան, ինչ-որ ձևով նյարդայնանում էր դրա առկայությունից:

Մի բան՝ նա չգիտեր ինչ անել իր ձեռքերի հետ: Դրանցից մեկը վաճառասեղանի վրայով շարտելով՝ նա սեղմում է Ջո Քեյնի ձեռքը:

— Բարև ձեզ,— ասում է հայրս:

Ջո Քեյնը լրագիրը ցած է դնում և ուշադիր նայում հորս: Հորս աչքերը վառվում էին: Հորս հայացքն ընկնում է վաճառասեղանի վրա դրված զամբյուղին, և նա սկսում է խոսել:

— Դե,— սկսում է նա տատանվելով,— դե, դուք իհարկե, լսել եք Քրիստափոր Կոլումբոսի մասին, չէ՞:

Հայրս ջղայնացած էր թվում:

— Այդ Քրիստափոր Կոլումբոսը սրիկա էր,— ազդու հայտարարում է հայրս,— նա խոսում էր ձուն ծայրին կանգնեցնելու մասին: Նա ասում է, որ ինքը կանգնեցնում է, իսկ հետո վերցնում է ու կոտրում ձվի ծայրը:

Այցելուին թվում է, թե հայրս իր ավերից դուրս է եկել Քրիստափոր Կոլումբոսի խարդախության պատճառով: Հայրս տրտնջում է ու հայհոյում: Նա հայտարարում է, որ սխալ է երեխաներին սովորեցնել, թե Քրիստափոր Կոլումբոսը մեծ մարդ է եղել, երբ, ի վերջո, նա վճռական պահին խաբել է: Կոլումբոսը հայտարարել էր, որ ձուն կկանգնեցնի ծայրով և ապա, երբ նրան հոխորտանքի էին հասցրել, խաբեության էր դիմել<sup>8</sup>: Էլի ու էլի Կոլումբոսի վրա բրթբրթալով՝ հայրս վաճառասեղանի վրայի զամբյուղից մի ձու է վերցնում և սկսում ետ ու առաջ անել: Պտտելով ձուն ձեռքերի մեջ՝ նա հրճվալից ժպտում է: Հայրս սկսում է ծամծմելով խոսել այն մասին, որ մարդկային մարմնից եկող էլեկտրականությունը կհաղորդվի ձվին և կներգործի նրա վրա: Նա հայտարարում է, որ առանց կոտրելու ձվի կճեպը և ձեռքերի մեջ հետ ու առաջ պտտելու գործությամբ՝ կարող է ձուն ծայրով կանգնեցնել: Հայրս բացատրում է, որ իր ձեռքերի ջերմությունը և ձվին տված իր այս նուրբ պտտային շարժումը ստեղծում են գրավիտացիոն նոր կենտրոն, և Ջո Քեյնը թեթևակի հետաքրքրվում է:

— Իմ ձեռքի տակով անցել են հազարավոր ձվեր,— ասում է հայրս:— Ոչ ոք ձվերի մասին ինձնից ավելին չգիտի:

Հայրս ձուն կանգնեցնում է վաճառասեղանի վրա, բայց այն ընկնում է կողքի: Նա հնարքը նորից ու նորից է փորձում՝ ամեն անգամ ձուն պտտելով ձեռքերի ավերի մեջ և ասելով բառեր՝ էլեկտրականության հրաշքների ու գրավիտացիոն օրենքների վերաբերյալ: Երբ կես ժամվա ճիգերից հետո նա հաջողեցնում է ձուն կանգնեցնել մի պահ, գլուխը վեր է բարձրացնում և պարզում, որ այցելուն այլևս իրեն չի նայում: Իսկ մինչ նրան հաջողվում է Ջո Քեյնի ուշադրությունը գրավել, ձուն նորից ու նորից պտտվում է և ընկնում կողքի:

---

<sup>8</sup> Կոլումբոսը հայտարարել էր, որ ձուն կկանգնեցնի ծայրով և ապա, երբ նրան հոխորտանքի էին հասցրել, խաբեության էր դիմել պատմում են, թե իբրև Ամերիկայի հայտնագործումը նսեմացնող մեծախոսներին Ք. Կոլումբոսն առաջարկում է ձուն կանգնեցնել ծայրի վրա, և երբ այդ նրանց չի հաջողվում, ինքն է կանգնեցնում՝ ձուն հարվածելով սեղանին:

Խաբեություն ասելով՝ նկատի ունի ծովագնացի հնարամտությունը:

Աճապարարի կրքով համակված և միաժամանակ առաջին ջանքերի ձախողումից հավասարակշռությունը իսպառ կորցրած հայրս այժմ դարակի վրայի իրենց տեղից վերցնում է թոչնային անճոռնություն պարունակող շշերը և սկսում է ցույց տալ դրանք այցելուին:

— Չէի՞ք ուզենա ունենալ յոթ ոտք է երկու գլուխ, ինչպես այս քաջ արարածը,— հարցնում է նա՝ ցուցադրելով իր գանձերից ամենանշանակալիցը:

Մի կայտառ ժպիտ է խաղալիս լինում հորս դեմքին: Վաճառասեղանի վրայով մեկնվելով՝ փորձում է թփթփացնել Ջո Քեյնի ուսը, ինչպես տեսել էր Բեն Հեդի սրահում, երբ ինքը երիտասարդ մշակ էր և շաբաթ երեկոները գնում էր քաղաք: Հորս այցելուն մի քիչ վատ է զգում՝ տեսնելով սարսափելիորեն ձևափոխված թոչնի մարմինը, որ ծածանվում է շշի ալկոհոլի մեջ և վեր է կենում, որ գնա: Վաճառասեղանի ետևից դուրս գալով՝ հայրս ամուր բռնում է երիտասարդի թևը և նորից տանում տեղը: Հայրս մի քիչ զայրացած է լինում և մի պահ ստիպված երեսը շրջում է՝ իրեն հարկադրելու ժպտալ: Ապա շշերը դնում է իրենց տեղը՝ դարակին: Առատաձեռնության պոթոկմամբ՝ նա նրբորեն պարտադրում է Ջո Քեյնին վերցնել ևս մի գլանակ և մի գավաթ սուրճ խմել իր հաշվին: Ապա վերցնում է մի թավա և վաճառասեղանի կժից մեջը քացախ է լցնում: Հայրս ինքն իրեն վճռում է մի նոր հնարք անել:

— Ես կտաքացնեմ այս ձուն քացախի այս թավայի մեջ,— ասում է նա,— ապա այն կանցկացնեմ շշի բերանով՝ առանց կճեպը կոտրելու: Երբ ձուն շշի մեջ լինի, այն կվերստանա իր նախածին ձևը, և կճեպը նորից կհաստանա: Ապա ես շիշը կտամ ձեզ: Կարող եք այն ձեզ հետ տանել ուր ուզեք: Մարդիկ կուզեն իմանալ, թե ոնց եք ձուն մտցրել շշի մեջ: Չասեք նրանց, թող իրենք գլխի ընկնեն: Այդպես են այս հնարքով զվարճանում:

Հայրս խնդմնդում է և այցելուին աչքով անում: Ջո Քեյնը որոշում է, որ իր դիմացի մարդը թեթևակի խանգարված է, բայց անվտանգ: Նա խմում է իրեն տրված մի գավաթ սուրճը և սկսում է իր թերթը կարդալ:

Քացախի մեջ ձուն տաքացնելուց հետո՝ հայրս այն գդալով դնում է վաճառասեղանին և գնալով հետնասենյակ՝ վերցնում է մի դատարկ շիշ: Նա բարկացած է լինում, որովհետև այցելուն չի հետևում իրեն, երբ ինքը սկսում էր իր հնարքը. հակառակ դրան՝ եռանդով գործի է անցնում: Երկար ժամանակ պայքարում է՝ փորձելով ձուն շշի բերանով անցկացնել, քացախի թավան նորից է դնում օջախին՝ նպատակ ունենալով վերատաքացնել ձուն, ապա ձեռքը մեկնում է վերցնելու և վառում մատները: Տաք քացախի մեջ երկրորդ տաքացումից հետո ձվի կճեպը մի քիչ փափկած է լինում, բայց ոչ այնքան, որպեսզի հայրս իրականացնի իր նպատակը: Նա աշխատում է ու աշխատում, և նրան տիրում է հուսահատ վճռականությունը: Երբ նա կարծում է, թե հնարքը ուր որ է գլուխ է գալիս, ուշացած գնացքը մտնում է կայարան, և Ջո Քեյնը անհոգ վեր է կենում, որ դուրս գնա: Երիտասարդը դրան մոտ է լինում: Հայրս մի վերջին, հուսահատ ճիգ է գործադրում՝ հաղթելու ձվին և նրան ստիպելու անել այն, ինչը կհաստատեր նրա հեղինակությունը, այնպիսի մի մարդու հեղինակություն, որը գիտե ինչպես զբաղեցնել իր ռեստորանի այցելուներին: Նա չարչարում է ձվին: Նա փորձում է կոպտություն բանեցնել: Հայեցում է, ճակատին քրտինք է երևում: Եվ երբ ձուն ձեռքի մեջ կոտրվում է, ու ձվի միջինը թափվում է շորերին, Ջո Քեյնը, որ կանգ էր առել դռների մոտ, շրջվում է ու ծիծաղում:

Բարկության մոնչոց է բարձրանում հորս կոկորդից: Նա ոտքերը զարկում է գետնին և զոչյունով արտաբերում բառերի մի անկապ շարան: Վաճառասեղանի զամբյուղից մի ուրիշ ձու հափշտակելով՝ այն նետում է երիտասարդի կողմը ու վրիպում:

Մինչ այս, մինչ այն՝ երիտասարդը դռնից ծլկում է ու ճողոպրում:

Հայրս եկավ վերև՝ ինձ ու մորս մոտ՝ ձեռքին մի ձու: Ես չգիտեմ, թե նա ինչ էր մտադիր անել: Կարծում եմ, որ նրա ուղեղում այդ ձուն ջարդելու ինչ-որ միտք կար՝ ջարդելու-փշրելու բոլոր ձվերը, և որ նա մտադիր էր այնպես անել, որ մենք տեսնենք, թե ինչպես է նա սկսում դա: Երբ,

այսուհանդերձ, նա հայտնվեց մորս մոտ, ինչ-որ բան պատահեց նրան: Նա ձուն նրբորեն դրեց սեղանին և ծնկի եկավ մահճակալի մոտ, ինչպես արդեն բացատրեցի: Ավելի ուշ էր, որ նա որոշեց ռեստորանը գիշերը փակել, գալ վերև ու անկողին մտնել: Երբ նա այս ամենը արեց, լույսը փչեց և երկար մրմնջոցից հետո նրանք երկուսն էլ քնեցին: Ենթադրում եմ, որ ես նույնպես քնեցի, բայց իմ քունն անհանգիստ էր: Ես զարթնեցի առավոտ ծեփին և երկար ժամանակ նայում էի սեղանին դրված ձվին: Արդյոք ձվերն ինչո՞ւ պիտի լինեին, ինչո՞ւ են ձվերից ծնվում հավեր, որոնք նորից ձու են ածում: Հարցը արյանս մեջ մտավ: Այն մնացել է այնտեղ, կարծում եմ, որովհետև հորս տղան եմ: Եվ այնուամենայնիվ, դարձյալ իմ մտքում այդ խնդիրը չի լուծված: Եվ դա, եզրակացնում եմ, ոչ այլ ինչ է, եթե ոչ ձվի վերջնական ու կատարյալ հաղթանակի մի այլ վկայություն, առնվազն այնքանով, որքանով այն առնչվում է իմ ընտանիքին: